<<Հաստատում եմ>>

Եղվարդի համայնքի ղեկավար

_____Ն. Սարգսյան

<<05>> նոյեմբեր 2019թ.

# ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## N << ԿՄԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/18>>

1. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը. **Եղվարդի համայնքապետարան, Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ ք. Եղվարդ, Երևանյան** 1:

2. Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը. Գնման առարկա է հանդիսանում **Եղվարդ համայնքի** կարիքների համար սեղանների և աթոռների ձեռքբերումը: Գնման գործընթացն իրականացվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի համաձայն:

3. **Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները**. <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 06-ի թիվ 386-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային ձևով գնումների կատարման>> կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան կազմվել է հրավեր, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի **2019 թվականի հոկտեմբերի 9-ին** կայացած նիստում: Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

4. **Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները**. Գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, պարզաբանումներ չեն ներկայացվել:

5. **Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները**. **<<ԿՄԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/18>>** ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացվել է թվով երեք հայտ՝

| Հ/հ | Հայտ ներկայացրած մասնակցի | | |
|---|---|---|---|
| | անվանումը | Էլեկտրոնային փոստի հասցեն | Տ/Փ-ի ստացականի հ/հ |
| 1 | Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյան | georgi-martirosyan@mail.ru | 000102787 |
| 2 | <<Արգավանդ Կահույք>> ՍՊԸ | armeps@inbox.ru | 000102703 |
| 3 | <<Առկտուր>> ՍՊԸ | sss.arktour@gmail.com | 000102753 |

6. **Հայտով ներկայացված գները.**

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի կողմից առաջարկված գները (ՀՀ դրամ), ընդ որում՝ | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| **Չափաբաժին N 1** | | | | |
| 1 | Ա/Ձ Գեորգի Մարտիրոսյան | 405 000 | - | 405 000 |
| 2 | <<Առկտուր>> ՍՊԸ | 420 000 | 84 000 | 504 000 |
| 3 | <<Արգավանդ Կահույք>> ՍՊԸ | 437 500 | 87 500 | 525 000 |
| **Չափաբաժին N 2** | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | <<Արգավանդ Կահույք>> ՍՊԸ | 975 000 | 195 000 | 1 170 000 |
| 2 | <<Առկտուր>> ՍՊԸ | 1 183 500 | 236 700 | 1 420 200 |

7. **Հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները**. Հայտերը գնահատվել են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և հրավերով սահմանված կարգով, և գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 3 որոշմամբ ընտրված մասնակից են ճանաչվել.

-N 1 չափաբաժնի մասով **Գեորգի Մարտիրոսյան Ա/Ձ** -ն:
-N 2 չափաբաժնի մասով **<<Արգավանդ Կահույք>> ՍՊԸ**-ն:

8. **Հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը**. <<ԿՄԵՔ- ԳՀԱՊՁԲ-19/18>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտեր չեն մերժվել:

9. **Պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.**

**Չափաբաժին 1**

2019 թվականի նոյեմբերի 1-ին Գնորդ՝ **Եղվարդ համայնքապետարանի**, որը գտնվում է ք. Եղվարդ, Երևանյան 1 հասցեում, և Վաճառող՝ **Գեորգի Մարտիրոսյան Ա/Ձ**-ի, որը գտնվում է **ք. Երևան, Մելքումովի փ. 72/1 հասցեում**, միջև կնքվել է Եղվարդ համայնքի կարիքների համար **սեղանների** ձեռքբերման գնման պայմանագիր N **<<ԿՄԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/18>>**: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 405 000 **(չորս հարյուր հինգ հազար)** ՀՀ դրամ:

**Չափաբաժին** 2

2019 թվականի նոյեմբերի 1-ին Գնորդ՝ **Եղվարդ համայնքապետարանի**, որը գտնվում է ք. Եղվարդ, Երևանյան 1 հասցեում, և Վաճառող՝ **<<Արգավանդ Կահույք>> ՍՊԸ-ի**, որը գտնվում **է ք. Երևան, Անդրանիկի 129, բն 4 հասցեում**, միջև կնքվել է Եղվարդ համայնքի կարիքների համար **աթոռների** ձեռքբերման գնման պայմանագիր N **<<ԿՄԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/18-1>>**: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 1 170 000 (մեկ միլիոն հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

10. **Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը**. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

11. **Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները**. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել:

**Հանձնաժողովի քարտուղար՝** _____ **Վ. Վիրաբյան**

*(ստորագրությունը)*

**(Կազմվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն)*